«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիրակչական նշանակությունը

Առարկան՝ հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լուարա Լաչինյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի համար 101 միջն դպրոց

Թեմա — Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը
Հարց- Ինչպիսի՞ ներգործություն ունի առակի ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա:

Նպատակ- Իմ Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

1.Աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մեջ դաստիարակել բարոյական բարձր արժեքներ, որպեսզի կարողանան տարբերակել աշխարհի չարն ու բարին և կյանքում ուղղորդվեն դրական արժեքներով:

2.Կարևոր է նաև այն,թե որքանով են սովորողները ընկալում առակի ասելիքը և այն համարում արդիական:

Ի՞նչ մեթոդներ կարելի է կիրառել բարության, պարտքի, պատասխանատվության բարոյական արժեքներ ձևավորելու համար հասարակագիտության դասընթացին «Առակ» թեմայի ուսումնառության ընթացքում

Հետազոտության խնդիրներն են.

. ՈՒսումնասիրել հոգեբանական, մանկավարժական, փիլիսոփայական մոտեցումները սովորողների արժեքային համակարգ ձևավորման հարցի շուրջ:

. ՈՒսումնասիրել առակի ժանրային առանձնահատկությունները և կառուցվածքը, բարոյախրատական և դաստիարակչական նշանակությունը, ներգործման ազդեցությունը:

. Դիտարկել՝ առակների ուսուցումը նպաստո՞ւմ է արժեհամակարգի ձևավորմանը: Թեմայի կարևորությունը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն .....4 էջ

2.Գլուխ 1 Ինչպիսի՞ ներգործություն ունի առակի ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա:.....7 էջ

3. Գլուխ 2. Արդյո՞ք Աստվածաշնչյան առակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում.....10 էջ

4. Հետազոտությունը գործնական համատեքստում 12էջ

4.Եզրակացություն 19էջ

5.Գրականության ցանկ.....20 էջ

Ներածություն

Ինչ է առակը:

Առակի ժանրը միշտ էլ արդիական է եղել, առակով դաստիարակել մարդկային լավագույն արժեքները ձևավորելը և մարդկային մոլորությունները պախարակելը միշտ էլ արդիական կմնան:

Առակ (Առ ակն՝ աչաքի առաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակները փոքրածավալ արձակ կամ չափածո ստեղծագործություններ են: Սովորաբար բաղկացած են լինում երկու մասերից՝ բուն կառուցվածքից և բարոյախրատական մասից: Երկրորդ մասում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ հենց առակի բարոյախոսությունն է: Առակը սկզբնապես ժողովրդական բանավոր ստեղծագործություն է եղել, կենդանական հեքիաթի մի տարատեսակ: Կարելի է ասել, որ առակը այդ տեսակի հեքիաթից է ծնվել:

Առակը խրատական բովանդակություն ունեցող փոքրածավալ ստեղծագործություն է: Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի , տարբեր առակաների ու բնության երևյութների միջոցով ակնարկվում են մարդիկ իրենց բացասական և դրական գծերով: Առակներում ներկայացվում են մարդկային տարբեր բնավորություններ, ծաղրվում զանազան արատներ՝ ծուլությունը՝ ստախոսությունը, նախանձը, չարությունը, ագահությունը, ժլատությունը:

Առակներում մեծ տեղ են զբաղեցնում երկխոսությունները, ժողովրդական բառերը և բառակապակցությունները (դարձվածքները), խոսքն ավելի կենդանի և անմիջական դարձնելու համար:

Ամբողջ աշխարհում հայտեր են հին հունական առակագիր Եզոպոսի , ֆրանսիացի Լաֆոնտեզ, ռուս Ի. Կռիլովի, գերմանացի Գ. Լեսինգի առակները: Հայ առակագրությունն սկսվում է 12-13-րդ դարերից: Հայ միջնադարյան լավագույն առակագիրներներն են Մ. Գոշը , Վ. Այգեկցին:

Առակները լինում են մի քանի տեսակի՝ փիլիսոփայական, հոգեբանափիլիսոփայական, աստվածաշնչյան և այլն:

Աստվածաշնչում տեղ գտած առակներն ունեն իրենց ուրույն մեկնաբանությունը և դաստիարակչական նշանակություն:

Հին կտակարանում Սողոմոն իմաստունի առակներն են, որոնք զետեղված են <<Առակաց>> գրքում:

Նոր կտակարանում Հիսուսի առակներն են, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն: Հիսուսի առակները գտնվում են Աստվածաշնչի կանոնական ավետարաններում: Դրանք հիմնականում հանդիպում են Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում, որտեղ այս առակներից շատերը կրկնվում են: Մինչդեռ Հովհաննես ավետարանիչը միայն երկու առակ է պատմում՝ «Գազանի և բարի հովվի առակը» 10-րդ գլխում և «Ճշմարիտ որթատունկի առակը» 15-րդ գլխում: Ավետարաններում ընդհանուր առմամբ կարելի է գտնել Հիսուսի 43 առակ:

Տարբեր ժամանակներում ստեղծված և սերնդեսերունդ փոխանցվող առակներում, ասացվածքներում ժողովուրդը գովերգել է բարին ու արդարը և վատաբանել չարն ու մերժելին: Բարությունը, արդարամտությունը, համեստությունը,ճշմարտասիրությունը բարոյական հատկանիշներ են. <<Բարու ճանապարհի սկիզբը արդարություն գործելն է >>[1]:

Առակների ամենաբնորոշ առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալը.

- Դրանք հանրաճանաչ են
- Դրանք հակիրճ են
- Նրանք կարող են շփվել չափածո կամ արձակ լեզվով
- Պատմության կարգը գծային է `առանց ժամանակի թռիչքների

[1] Աստվածաշունչ, գիրք Առակաց 16:5, էջ 754

- Դրանք դաստիարակչական . բարոյականացնող են
- Գերակշռում են կենդանիների կամ հումանիզացված առարկաների (անձնավորված) կերպարները ,կան նաև կերպարներ մարդկային և աստվածային կերպարներով

Առակների ուսուցումը գործընթաց է, որը իրենից ներկայացնում է

_համագործակցային կարողություններ և հմտություններ

- ➢ խթանում է տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը

- ➢ ձևավորում է ուրիշների կարծիքը լսելու և հաշվի առնելու ունակություն

- ➢ ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունների իմացությունն է խորացնում

առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել սովորողի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով:

Գլուխ 1

Ինչպիսի՞ ներգործություն ունի առակի ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա:

Նոր ժամանակներում արդի մարտահրավերների պայմաններում կիրթ, զարգացած հասարակություն, ամուր պետականություն ունենալու համար կարևոր է ոչ միայն տնտեսական, շուկայական, սոցիալական բնագավառների կատարելագործումը, այլև կրթության և դաստիարակության, ազգային և համամարդկային հոգևոր արժեքների ուսուցումն ու զարգացումը:

Նոր Սերնդի արժեհամակարգի ձևավորման գործում լուրջ դերակատարում ունի դպրոցը: Ժամանակակից դպրոցի կարևոր առաքելություններից է բարոյական և հոգևոր արժեքների ձավորումն ու զարգացումը: Դպրոցի խնդիրն է պահպանել ու փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք:

Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում առաջնային գործոններ են գիտելիքը և կարողությունները, որոնք կազմում են կրթական արժեքի մի մասը: Չպետք է սովորողներին գիտելիքը հաղորդվի որպես տեղեկատվություն, առանց խորանալու դրա էության ու արժեքների մեջ: Հումանիտար առարկաների դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ճշտապահությունը, ազնվությունը, ընկերասիրությունը, բարոյական և կամային մի շարք հատկանիշներ: Այսինքն անձի մոտ ձևավորում են արժեքային բարձր հատկանիշներ:Այդ արժեքների ձևավորման գործում մեծ դեր ունեն նաև Աստվածաշնչյան առակների ուսուցումը:Առակի ընթերցումը ծառայում է ոչ միայն կարդալու տեխնիկայի զարգացմանը, այլև

արժեքային համակարգի ձևավորմանը, մարդկային բարձր արժեքների ուսուցմանը: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունն իր ժանրային բազմազանությամբ:

Հաշվի առնելով բանահյուսության բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը՝ այն կարող է և պետք է ծառայի արժեհամակարգի, բարոյական դաստիարակության ճիշտ

ձևավորմանը : Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ հետազոտության նյութ է դարձել Աստվածաշնչյան առակների դաստիրակչական նշանակությունը:
Ուսումնասիրելով այս նյութը ես փորձել եմ պատասխանել հետյևալ հարցին՝ Ինչպիսի՞ ներգործություն ունի առակի ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա:

Այս թեման կարևոր եմ համարել, քանի որ 21-րդ դարում բարոյական նորմերը, արժեքային համակարգը ենթարկվում են բազմաթիվ ազդեցությունների՝ թե դրական, թե բացասական: Ներկայումս կրթակարգերի մշակման գործը շատ ավելի բարդ է և բազմաբովանդակ, որովհետև աշխարհը փոխվում է օրեցօր, առաջանում են նոր մարտահրավերներ, և կրթության արդիականացումն ու նոր ռազմավարություն մշակելը երբեմն դառնում են օրվա խնդիր: Բայց պետք է ընդունել նաև, որ շատ հաճախ նորարարությունները կատարվում են լավագույն ավանդույթների և փորձի հիման վրա: Նման արդյունավետ ձեռնարկումներից է նաև ներկա կրթադաստիարակչական համակարգերում ի թիվս շատ արդիական մեթոդների, որոնց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում առակի՝ որպես դաստիարակության փորձված մեթոդի կիրառումը: Իսկ ինչ է առակը,
ինչ ծագում ունի և ինչու է հատակապես նպաստում արժեհամակարգի զարգացման վրա:

Այս հարցերի պատասխանը կփորձեմ ես տալ իմ հետազոտական աշխատանքում: Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը, առակների բարոյական պատգամներն ու խրատները անհերքելի դեր ունեն մարդու բարոյական զարգացման և արժեքային համակարգի ձևավորման գործում: Հետազոտության արդյունքում կփորձեմ գտնել որևէ նոր մոտեցում, նոր տեսակետ , որը իր բնույթով լինի նորարարություն և ավելի արդիական տեսանկյունից լուսաբանի առաջին

Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն իմացական որա:Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների գումարով, չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով:

Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավոր ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը: Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որը իրենից ներկայացնում համագործակցային ուսուցում և պահանջում է հնարավորինս ճիշտ և հստակ կազմակերպում:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում:

Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության , դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով . մտորել-գնահատել – իմաստավորել- յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում:

Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս դպրոցից և կրում շարունակական բնույթ:

Երեխան դեռևս դպրոցից բացահայտում եմ գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում:Անձի դրական հատկանիշների գնահատումը, արժևորումը բացահայտվում է այն բարոյախոսությամբ , որի վրա մեծ ազդեցություն ունի առակի ուսուցմումը:

Գլուխ 2 .

Արդյո՞ք Աստվածաշնչյան առակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:

Այո սովորեցնում են:

Աստվածաշնչյան առակները ինչ-որ կերպ հեքիաթներ և պատմություններ են, որոնք հիմք են տալիս մտածելու կյանքի և մեր արարքների մասին, կրում են ուսանելի պահ: Նրանցից յուրաքանչյուրի մեջ կա մի իմաստության հատիկ, որը կամաց-կամաց աճում է ու տալիս իր դրական ընձյուղները:

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող
էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝

մեջբերելով առակներ: Առակի ուսուցումը՝ մարդասիրական որակներ սերմանելու հրաշալի միջոց է աճող սերնդի համար:
Աստվածային սեր, նախախնամություն, արդարություն և ամենակարողություն, աղոթք և պահեցողություն, «ես»-ի և մեղքի հաղթահարման բազում ուղիներ. ահա այս թեմաներն են արծարծված առակներում:

Ի՞նչ են մեզ սովորեցնում Աստվածաշնչյան առակները: Նրանք ստիպում են մտածել մեր արարքների մասին, հասկանալ դրանց հետևանքները: Այս ամբողջ գիտակցության արդյունքում առաջանում է այնպիսի դրական հատկությունների ձևավորում, ինչպիսիք են գթասրտությունը, բարությունը, կարեկցանքը, սերը մարդկանց հանդեպ:

Նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր շարունակ կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:

Այսպիսով Աստվածաշնչյան առակների ուսուցումը երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ: Սովորողների մոտ ձևավորվում է բարոյական արժեքներ,ինչպիսիք են.

- ազնվություն
- սեր
- բարություն
- ներողամտություն
- հանդուրժողականություն
- ընկերասիրություն
- գթասրտություն

Երիտասարդ սերնդի համար առակը կարող է դառնալ կյանքի որոշակի պահի առաջնորդող լույս, ինչպես նաև հարցի նշան և պատասխան: Յուրաքանչյուր առակ հստակ պատգամ ունի: Հետևենք դրանց և փորձենք կիրառել մեր կյանքում:

Հետազոտությունը գործնական համատեքստում

Այսօր դասագրքերում առաջարկվող տարաբնույթ առակների մեջ կան աստվածաշնչյան առակներ, որոնց դաստիարակչական արժեքը դժվար է գերագնահատել:Այս գիտակցությամբ էլ նպատակահարմար եմ գտել իմ հետազոտական աշխատանքը ներկայացնել Աստվածաշնչյան առակների դաստիրակչական նշանակությունը և պարզել

Ինչպիսի՞ ներգործություն ունի առակի ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա

Կյանքի բարձրագույն արժեքներ են ազնվությունը, արդարությունը, աշխատասիրությունը, դիմացինին գնահատելու կարողությունը: Այս գաղափարները խորապես ընկալելու և աշակերտի արժեքային համակարգ ներմուծելու նպատակով անհրաժեշտ է առակների խոհափիլիսոփայական և խրատական գաղափարը կապել սովորոների կյանքի հետ, ստիպել, որ աշակերտը զգա, վերապրին, համեմատականներ անցկացնի: Առակների դիդակտիկական և դաստիարակչական հնարավորությունները ազդում են երեխայի բարոյական զարգացման վրա: Սովորողների անձնային որակների վրա առակի ազդեցության շրջանակները որոշելու համար ես ուսումնասիրել եմ առակի ժանրային առանձնահատկությունները:

Իմ հետազոտական աշխատանքում առկա են ինչպես ավանդական, այնպես էլ նոր մեթոդներ , որոնք ավելի հետաքրքիր և մատչելի են դարձրել առակի ուսուցումը

հասարակագիտության առարկայի մեջ: Հետազոտության համար ընտրել եմ 8-րդ դասարանը՝ 18աշակերտ :

Հետազոտությունը կատարել եմ 2 առարկաների շրջանակում `ՀԵՊ և հասարակագիտություն 8 _րդ դասարան :

Քննարկման համար առանձնացրել եմ Աստվածաշնչյան առակները:

Իսկ ինչու՞ հենց Աստվածաշնչյան առակները: Ի՞նչ դաստիարակող ներուժ ունեն դրանք իրենց մեջ: Աստվածաշնչյան առակները հեքիաթային կամ առասպելական պատմություններ չեն՝ դրանք վերցված են մարդկանց կյանքից և առօրյա կենցաղից:

Իսկ այդ առակների հերոսները ոչ թե խոսող կենդանիներ են, թռչող գազաններ , այլ իրական մարդիկ:

Սա թերևս Աստվածաշնչյան առակների ամենաառանցքային արժանիքն է հասարակագիտության և

հեՊ դասաժամերին ուսուցումն ու դաստիարակությունը մատչելի, իրական, առօրեական ձևով իրականացնելու համար:

Քննարկման համար առանձնացրել եմ «Որոմների առակը.», «Սերմնացանի առակը», Բարի Սամարացի

»:

Ստեղծվել է բարենպաստ միջավայր , որտեղ սովորողները ազատորեն արտահայտել են իրենց կարծիքը, վերաբերմունքը, զգացմունքները, ազատ հարցադրումներ արել, ընկերների հետ քննարկել, համադրել կարծիքները, անդրադարձ կատարել: Աշխատանքի ընթացքում արդյունքները ստուգվել ու գնահատվել են հետևյալ մեթոդների կիրառմամբ

1.Մոդելավորում

2. Զրույց

3. Դիտարկում 4. Հարցաթերթիկ:

1.Մոդելավորում.

Մինչ առակների ուսուցման աշխատանքները սկսելը մտագրոհի միջոցով փորձել ենք պարզել, թե սովորողները ինչ պատկերացում ունեն հետևյալ գաղափարների շուրջ՝ • ազնվություն

- սեր
- բարություն
- ներողամտություն
- հանդուրժողականություն
- ընկերասիրություն
- գթասրտություն

Կատարվել է այս հասկացությունների մոդելավորում:

Մոդելավորումը գիտական ճանաչողական մեթոդ է, որը հնարավորություն է տալիս ակնառու բնութագրել ճանաչողական առարկան: Նույն գաղափարների մոդելավորումը կատարվել է նաև հետազոտության վերջում: Արդյունքները համեմատվել են

Հստակ պատկերացումների բացակայություն	Պատկերացումների որոշ իմացություն
Ոչ դիպուկ բնութագրում	Գաղափարների բնութագրման կարողություն
Գաղափարների աղոտ գիտակցում	Ընկալում վերարտադրում
Մինչև ուսուցումը 1. 2.	Ուսուցումից հետո 1. 2.

Դժվար արտահայտվելու կարողություն	Խոսքում եզրույթների գործածություն

2. Զրույց.

Վարել ենք զրույց՝ ըստ նախապես կազմված հարցերի, որոնք անմիջականորեն կապված են հետազոտության հիմնախնդրի հետ:

Յուրաքանչյուր առակի շուրջ ծավալված զրույցից հետո սովորողներին հանձնարարվել է գրել 1 միտք , որը սովորեցին, և 1 բառ, որը տպավորվեց: Այդ պատասխաններից առանձնացրել մի քանիսը.

1 բառ	1 միտք	1 նախադասություն

4.Դիտարկում , հարցաթերթիկ.

6. Վերոնշված մեթոդները եղել են հետազոտության օժանդակ միջոցներ, իսկ հիմնական միջոց է ծառայել դիտարկման և հարցաթերթիկի մեթոդը: Գրառումներով կատարվել է կարճաժամկետ նպատակաուղղված դիտարկում, սահմանվել է ուսումնասիրվող հատկանիշների հստակ քանակ՝ ազնվություն, աշխատասիրություն, երախտագիտություն:

Դիտարկումը հնարավորություն է տվել ընկալելու սովորողի վարքագիծը, երևույթներին հետևել կոնկրետ իրավիճակում, բացահայտել սովորողի սկզբունքայնությունը, վարքագիծը, բնավորությունը, դաստիարակվածությունը: Դիտարկման համար կիրառել ենք իրավիճակային քննարկման հնարը: Մտածել և գրել ենք առակների բարոյախրատական իմաստներին համապատասխան իրավիճակներ: Վերջին դասաժամին սովորողներին բաժանել ենք խմբերի և հանձնարարել կարդալ իրավիճակները , առաջարկել լուծում և հիմնավորել: Ընթացքում կատարել ենք գրառումներ:

Հարց ` 1. Ո՞վ է ճիշտ և ինչո՞ւ:

2. Ի՞նչ կանեք, եթե հայտնվեք նմանատիպ իրավիճակում:

Իրավիճակային քննարկումների հնարը հնարավորություն է տվել, որ սովորողը պայմանականորեն հայտնվի տվյալ իրավիճակում, վերապրի, իր միջով անցկացնի այդ ամենը, տա լուծում և կատարի իր արժեհամակարգին համապատասխան որոշումներ, որն էլ կբացահայտի ուսանածի արդյունքը:

Աշակերտները քննարկել են իրավիճակները և ներկայացրել իրենց լուծումները, առաջարկները: Մյուս խմբերի կողմից կատարվել են լրացումներ: Իրավիճակային քննարկումներին սովորողները մասնակցել են մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ:

Արդյունքները գոհացնող էին և գովելի: Հիմնականում հնչում էին պատասխաններ, որոնց ուղղված էր մեր հետազոտական աշխատանքը, այսինքն ` ազնվության, աշխատասիրության, երախտագիտության արժեքների ձևավորմանը: Թեև կային պատասխաններ, որոնք տարբերվում էին մեր առջև դրած նպատակներից կամ ձևական էին , առանց հիմնավորման:

Դասը եզրափակել ենք հարցման մեթոդի կիրառմամբ: Կազմել ենք հարցաթերթիկ՝ ըստ գրավոր հարցման մեթոդի սկզբունքների: Հարցաթերթիկը հնարավորություն է տվել բացահայտել սովորողների տեսակետները, վերաբերմունքը, գործունեության դրդապատճառները, ամբողջացնելու արդյունքները:

Կատարված աշխատանքների վերջնարդյունքում ունենք հետևյալ ցուցիչը.

Արժեհամակարգի ձևավորումը առակների ուսուցման միջոցով



55%

Չի նպաստում

27%

Հարցաթերթիկ

1.Ինչպիսի՞ բարոյական արժեքներ սովորեցիր առակից:

Թվարկել .....

2. Ո՞ր հատկանիշն ես կարևորում

ա) Համառոտ ներկայացրու.

բ) Ինչ ես հասկանում բարոյական արժեքներ ասելով ...

Արժեքային համակարգ

1. Կազմել գծապատկեր արժեքային համակարգ


սեր
ընկերասիրություն
ազնվություն
հանդուրժողականություն
ներողամտություն
բարություն
գթասրտություն

Եզրակացություն

Այսպիսով, դասը, հաճախակի համեմվելով աստվածաշնչյան առակներով, կդառնա ավելի հետաքրքիր, հագեցած ու տեսանելի,իսկ աշակերտները կդառնան բարձր արժեհամակարգի տեր մարդիկ, կուղղորդվեն բարոյական սկզբունքներով և արժեքներով:

Առակները մեծ ճանաչողական արժեք ունեն: Նրանք ժամանակին հոգևոր սնունդ են տվել ընթերցողին և ունկնդրին: Դրանք կարևոր աղբյուր են ժամանակի կյանքի բազմաթիվ այնպիսի կողմերի լուսաբանման համար, որոնց մասին լռում են մատենագրական մյուս հուշարձանները:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում անչափ կարևոր են բարոյական արժեքները՝ մարդասիրության, հայրենասիրության, ազնվության, արդարամտության, քրիստոնեական հավատի վերաբերյալ աստվածաշնչյան պատվիրանները, որոնք գրականության սնուցող կենարար աղբյուրներից են: Աստվածաշունչը շարունակում է պահպանել հասարակական մտածողության ձևավորման վրա ունեցած իր անգնահատելի ազդեցությունը՝ սերմանել սիրո ու բարություն: Այդ պատճառով աստվածաշնչյան առակները միշտ արդիական են, սիրելի և ընկալելի:

Անտարակույս է, որ աստվածաշնչյան աշխարհայեցողությունն առանձնակի կարևորություն ունի մատաղ սերնդի հայրենասիրական, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջադրում է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման իր խնդիրներն ու նպատակները, եղանակներն ու մեթոդները, ճշգրտում արժեհամակարգային չափանիշները: Սակայն կան չափանիշներ, որոնք միշտ կենսունակ են ու առաջնային ցանկացած ժամանակաշրջանի համար: Հատկապես մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման գործընթացներում դրանք մշտական են և հույժ կարևոր մեր օրերում:

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն:

Օգտագործված գրականություն

1. Հայ եկեղեցու պատմություն V դասարան , Երևան , 2019թ

2.Դասագիրք Հասարակագիտություն 8_րդ դասարան

3.Աստվածաշունչ, Մայր Աթոռ, Սբ. Էջմիածին, 2003թ.

4.Լ.Թորգոմյան, Մանկավարժության արժեբանության հիմունքներ,

ՈՒսումնական ձեռնարկ, հրատ.,2011

5 Հայոց Եկեղեցու Պատմություն, 5-րդ դասարանի դասագիրք, Տիգրան Մեծ

6 Համացանց Lib.armedu. am,Հանրակրթական պետական չափորոշիչ:

7 https://mediamax.am/am/column/12925